

«ՖՅՈՒՉՐ ԿԱՊԻՏԱԼ ՄԱՐԿԵՏ» Սահմանափակ
Պատասխանատվությամբ Ընկերության
մասնակիցների ընդհանուր ժողովում
« 19 » հունիսի 2008թ.

Ժողովի նախագահ՝ **Տ. Խանիկյան**

(ստորագրություն)

**«ՖՅՈՒՉՐ ԿԱՊԻՏԱԼ ՄԱՐԿԵՏ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ
ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

Ը Ն Թ Ա Յ Ա Կ Ա Ր Գ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 Սույնով սահմանվում է «Ֆյուչր կապիտալ մարկետ» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) արտարժույթային փոխանակումների (այսուհետ՝ փոխանակումներ) իրականացման ընթացակարգը:
- 1.2 Սույն ընթացակարգի իմաստով՝
- **Արտարժույթ** - «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 4-րդ կետով սահմանված միջոցները.
 - **Արտարժույթի փոխանակում** – ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերի, ֆինանսական կազմակերպությունների, հաճախորդների հետ արտարժույթի առք ու վաճառքի անկանխիկ գործարքներ.
 - **Թող գործարք /tod, today/** - արժույթային փոխանակման գործարք, որի գծով վճարումները իրականացվում են գործարքի կնքման օրը՝ գործարքի կնքման պահին ֆիքսված փոխարժեքով.
 - **Թոմ գործարք /tom, tomorrow/** - արժույթային փոխանակման գործարք, որի գծով վճարումները իրականացվում են գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրը՝ գործարքի կնքման պահին ֆիքսված փոխարժեքով.
 - **Սփոթ գործարք /spot/** - արժույթային փոխանակման գործարք, որի գծով վճարումները իրականացվում են գործարքի կնքմանը հաջորդող երկրորդ աշխատանքային օրը՝ գործարքի կնքման պահին ֆիքսված փոխարժեքով.
 - **Ֆորվարդ գործարք /forward/** - արժույթային փոխանակման գործարք, որի գծով վճարումները իրականացվում են գործարքի կնքմանը հաջորդող երկրորդ աշխատանքային օրվանից հետո՝ գործարքի կնքման պահին ֆիքսված փոխարժեքով.
 - **Արժույթային սվոփ** - արժույթի փոխանակման երկու միաժամանակյա գործարքների համակցություն, որոնք իրենցից ներկայացնում են մեկ արժույթի վաճառք մյուսով պայմանով, որ առաջին արժույթը նույն ծավալով որոշակի ժամանակ անց հետ է գնվելու՝ գործարքի կնքման պահին ֆիքսված փոխարժեքներով.
 - **Կնքման օր /Trade date/** - գործարքի կնքման օր.
 - **Կատարման օր /Value date/** - փոխանակման գործարքի պայմաններով սահմանված ստանձնած պարտավորությունների իրականացման օր.
 - **Չուսացում (netting)** – միևնույն կատարման օրով արտարժույթի փոխանակման գործարքներ իրականացնելիս կողմերի համաձայնությամբ փոխադարձ պարտավորությունների փոխհաշվանցում.

2. ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄՆԵՐ

- 2.1 Ընկերությունը արտարժույթային փոխանակումների գործառնությունների վերաբերյալ ցանկացած որոշում կայացնում հիմք ընդունելով Ընկերության Ներդրումային քաղաքականությունը և ի կատարումն Ընկերության գործարար ծրագրի՝ ելնելով իրացվելիության խնդիրներից և շուկայական ռիսկերի գնահատման արդյունքներից:
- 2.2 Ընկերությունը արտարժույթային փոխանակումներ իրականացնում իր անունից և իր հաշվին կամ իր անունից և հաճախորդի հաշվին:
- 2.2.1 Ելնելով իր խնդիրներից Ընկերությունը կարող է իրականացնել արտարժույթի փոխանակման անկանխիկ գործառնություններ ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆինանսական հաստատությունների և ոչ ֆինանսական հաստատություն հանդիսացող իրավաբանական անձանց (այդ թվում Հայաստանի ֆոնդային բորսայում), ինչպես նաև ֆիզիկական անձանց հետ:

- 2.2.2 Փոխանակման գործառնությունների ընթացքում փոխարժեքը սահմանվում է կոնտրագենտի հետ ուղղակի բանակցությունների միջոցով, սակայն հաշվի են առնվում հետևյալ գործոնները.
- ա) ՀՀ ԿԲ կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքների մեծությունները
 - բ) ՀՀ միջբանկային շուկայում և Հայաստանի ֆոնդային բորսայում նախորդ օրվա ձևավորված փոխարժեքների միջին մեծությունները
 - գ) ՀՀ միջբանկային շուկայում և Հայաստանի ֆոնդային բորսայում արտարժույթի ընթացիկ առաջարկի և պահանջարկի հարաբերակցությունը, ինչպես նաև Ընկերության առաջարկի և պահանջարկի մեծությունները
 - դ) այլ գործոններ (ֆորս-մաժորային պայմաններ, շուկայի ուսումնասիրության հիման վրա կատարված կանխատեսումներ, այլ սուբյեկտիվ գործոններ)
- 2.2.3 Սույն գործարքները իրականացվում են երկկողմանի ստորագրված և կնքված (երբ կոնտրագենտ կողմը ֆիզիկական անձ է, ապա միայն ստորագրված) պայմանագրերի հիման վրա:
- 2.2.4 Արտարժույթային փոխանակման գործարք իրականացնելու որոշումը կայացնում է Ընկերության Գործադիր տնօրենը, որը և ստորագրում է արտարժույթային փոխանակման պայմանագիրը:
- 2.2.5 Պայմանագիրը պետք է ներառի գործարքի բոլոր էական պայմանները, այդ թվում՝
- գործարքի կնքման ամսաթիվը
 - Վաճառող և Գնորդ կողմերի հստակեցումը (նույնականացումը)
 - գնվող և վաճառվող արժույթների անվանումները և գումարները, փոխարժեքը
 - գործարքի իրականացման ժամկետները /թող, թոմ, սփոթ, ֆորվարդ/
 - վճարման վավերապայմանները:
- 2.2.6 Կոնտրագենտի կողմից պայմանագիրը ստորագրելուց հետո Գործադիր տնօրենը գրանցում է պայմանագիրը Ընկերության Պայմանագրերի Գրանցամատյանում, կազմում է համապատասխան փոխանցման հանձնարարական(ները), որի(որոնց) կատարումը կապահովի պայմանագրով նախատեսված Ընկերության պարտավորությունների կատարումը և ներկայացնում է հանձնարարականը(ները) համապատասխան բանկ՝ ի կատարումն:
- 2.2.7 Փոխանցման հանձնարարականի ձևը և ներկայացման կարգը սահմանվում է համապատասխան պայմանագրով, Սպասարկման պայմանագրով կամ գործարար սովորույթներով:
- 2.2.8 Գործարքի պայմանագիրը և փոխանցման հանձնարարականները պայմանագրի կնքման օրը Գործադիր տնօրենը ներկայացնում է Ընկերության Գլխավոր հաշվապահին՝ գործարքը հաշվապահական հաշվառման համակարգում ձևակերպելու նպատակով:
- 2.2.9 Ընկերության Գլխավոր հաշվապահը, ոչ ուշ, քան գործարքի կատարման օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրվա ավարտը պարտավոր է ստանալ քաղվածք բանկային հաշիվներից կատարված գործարքի վերաբերյալ և համեմատել քաղվածքում արտացոլված տվյալները պայմանագրի էական պայմանների հետ: Տվյալների համապատասխանության մասին Գլխավոր հաշվապահը տեղեկացնում է Գործադիր տնօրենին բանավոր: Անհամապատասխանության դեպքում Գործադիր տնօրենը գործողություններ է իրականացնում անհամապատասխանությունները պարզելու և ուղղելու նպատակով:
- 2.2.10 Գործարքի կատարման հսկողությունը իրականացնում է Ընկերության Գործադիր տնօրենը:
- 2.2.11 Նպատակահարմարության դեպքում կոնտրագենտի հետ համաձայնեցնելով և համապատասխան պայմանագրի հիման վրա Ընկերությունը կոնտրագենտի հետ փոխադարձ պարտավորությունների առկայության պայմաններում կարող է իրականացնել զուտացում: Այդ դեպքում

ա) միևնույն կատարման օրով և միևնույն արժույթով գումարները, որոնք յուրաքանչյուր կողմ պետք է վճարի, գումարվում են:

բ) եթե մեկ կողմի ընդհանուր պարտավորությունները մեկ արժույթի գծով գերազանցում են մյուս կողմի պարտավորությունները նույն արժույթի գծով, ապա տարբերությունը փոխանցում է այն կողմը, որի պարտավորությունները ավելի մեծ են:

գ) եթե կողմերի ընդհանուր պարտավորությունները միևնույն արժույթով համընկնում են, ապա դրանք կարգավորվում են առանց միջոցների հոսքերի:

2.2.12 Հայաստանի ֆոնդային բորսայում իրականացվող գործարքները իրականացվում են նախապես դեպոնացված միջոցների շրջանակներում:

2.2.13 Հաճախորդի պատվերով Ընկերությունը կարող է իրականացնել արտարժույթի փոխանակման անկանխիկ գործառնություններ ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆինանսական հաստատությունների հետ (այդ թվում Հայաստանի ֆոնդային բորսայում): Հայաստանի ֆոնդային բորսայում պատվերի կատարման դեպքում`

- Հաճախորդը պարտավոր է բորսայական առևտրի օրվա մինչև 9.30-ը Ընկերության` Հաճախորդների հետ գործարքների իրականացման համար բացված բանկային հաշվին փոխանցել պատվերով նախատեսված գումարը, այդ թվում` Ընկերության միջնորդավճարը,
- Ընկերության Գլխավոր հաշվապահը` Գործադիր տնօրենի հանձնարարությամբ պարտավոր է մինչև 9.45 ստուգել Ընկերության` Հաճախորդների հետ գործարքների իրականացման համար բացված բանկային հաշվին համապատասխան միջոցների առկայությունը և բանավոր տեղեկացնել այդ մասին Գործադիր տնօրենին,
- Միջոցների արկայության դեպքում համապատասխան միջոցները փոխանցվում են Հայաստանի ֆոնդային բորսայի համապատասխան առևտրային հաշվին և Գործադիր տնօրենը Հայաստանի ֆոնդային բորսայի առևտրային համակարգ է մուտքագրում պատվերի վավերապայմանները` Հայաստանի ֆոնդային բորսայի կանոնների համաձայն,
- Եթե Ընկերության` Հաճախորդների հետ գործարքների իրականացման համար բացված բանկային հաշվին համապատասխան միջոցները բացակայում են մինչև բորսայական առևտրի օրվա 9.30-ը, ապա Գլխավոր հաշվապահը այդ մասին տեղեկացնում է Ընկերության Գործադիր տնօրենին: Այդ դեպքում պատվերը չի կատարվում և այդ մասին Հաճախորդը տեղեկացվում է բանավոր և/կամ հեռախոսակապի և/կամ էլեկտրոնային փոստի միջոցով,
- Մինչև բորսայական առևտրի օրվա 18.00 Գործադիր տնօրենը Հաճախորդին արձեռն, ֆաքսով կամ էլեկտրոնային փաստով ներկայացնում (ուղարկում) է վավերագիր (ծանուցում)` պատվերի կատարման կամ չկատարման վերաբերյալ: Պատվերի կատարման դեպքում վավերագրի(ծանուցման) մեջ պետք է ներառվեն առնվազն հետևյալ տեղեկությունները` Հաճախորդի անվանումը, պատվերի ամսաթիվը և համարը, գործարքի կատարման ամսաթիվը, գնվող արժույթի անվանումը և ծավալը, վաճառվող արժույթի անվանումը և ծավալը, փոխարժեքը, վերջնահաշվարկի ամսաթիվը,
- Բորսայական առևտրի օրվանը հաջորդող օրվա մինչև 15.00 Ընկերությունը կատարում է վերջնահաշվարկ` փոխանցելով Հաճախորդի համապատասխան հաշիվներին բորսայական առևտրի արդյունքում առաջացած դրամական միջոցները,
- Պատվերի ընդունման և վավերագրի տրամադրման փաստը գրանցվում է Ընկերության պատվերների և վավերագրերի գրանցամատյանում` պատվերի ընդունման և վավերագրի տրամադրման պահին,

- Սույն կետով նախատեսված գործարքների պարտավորությունների իրականացումը և հաշվապահական հաշվառումը իրականացվում է սույն Ընթացակարգի 2.2.6-2.2.10 կետերի համաձայն:

- 2.2.14 Հաճախորդի շահերի պաշտպանության նպատակով Ընկերությունը հաճախորդի պատվերով գործարքները նախընտրում է իրականացնել Հայաստանի ֆոնդայում բորսայում և այլ ընկերությունների հետ գործարքներ կնքում է միայն գործարքի առավել լավ պայմանների դեպքում:
- 2.2.15 Հաճախորդի պատվերներով կատարվող գործարքների Ընկերության միջնորդավճարի չափը սահմանվում է Ընկերության սակագներով կամ կարգավորվում է պայմանագրային սկզբունքով:

3. ՄԻՋՔԱՆԿԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԵՎ ԱՅԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՍՎՈՊ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

- 3.1 Միջբանկային շուկայում և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ իրականացվող արտարժույթային սվոպ գործարքները կնքվում են հեռախոսով կամ էլեկտրոնային կապի միջոցներով, որի ընթացքում կողմերը համաձայնեցնում են գործարքի հիմնական պայմանները, այդ թվում`
- գործարքի կնքման ամսաթիվը;
 - Վաճառող և Գնորդ կողմերի հստակեցումը;
 - գնվող և վաճառվող արժույթների անվանումները և գումարները, փոխարժեքը;
 - հակադարձ գործարքի փոխարժեքը;
 - գործարքի իրականացման ժամկետները;
 - վճարման տվյալները;
- 3.2 ՀՀ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ արտարժույթային սվոպ պայմանագրերը ստորագրվում են Ընկերության Գործադիր տնօրենի կամ լիազորված անձի կողմից:
- 3.3 Պայմանագրի առկայության դեպքում պայմանագրով ստանձնած պարտավորությունների իրականացումը և հաշվապահական հաշվառումը իրականացվում է սույն Ընթացակարգի 2.2.6-2.2.10 կետերի համաձայն:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 4.1 Սույն Ընթացակարգի փոփոխությունները և լրացումները հաստատվում են իրավասու կառավարման մարմնի կողմից և ուժի մեջ են մտնում հաստատվելուց անմիջապես հետո: